ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, JURISPRUDENCE, ЮРИСПРУДЕНЦИЯ

2020 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-Ի «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԿՐԱԿԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ» ԵՌԱԿՈՂՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՒԺՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ *

ՀՏԴ 341, 342 *DOI: 10.52063/25792652-2023.2.17-9*

ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման (ԱԵԳՄՄ) հիմնադիր նախագահ,
«Արցախ» գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն,
«Գիտական Արցախ» պարբերականի գլխավոր խմբագիր,
ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան,
«AVE JUS» փաստաբանական գրասենյակի հիմնադիր,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ք. Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն
avetiq.hh@gmail.com
ORCID: 0000-0002-9834-0083

ՄԱՐԻԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Արցախի Հանրապետության նախագահի օգնական,
Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց համալսարանի դասախոս,
Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման (ԱԵԳՄՄ) անդամ,
ք. Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն
mariamgrigoryan93@yandex.ru
ORCID: 0000-0002-0562-7473

Արցախյան 44-օրյա պատերազմը ավարտվեց Հայաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի միջև 2020 թվականի նոյեմբերի 9-ին ստորագրված եռակողմ հայտարարությամբ: Ստորագրված եռակողմ հայտարարությունն իր քաղաքական նշանակությամբ, իրավաբանական ուժով և դրանից բխող իրավաքաղաքական և այլ հետևանքներով տարբեր քաղաքական և գիտական շրջանակներում առաջացնում է լուրջ տարակարծություններ ու հակասական տեսակետներ:

Հոդվածի նպատակն է հետազոտել և վեր հանել ստորագրված եռակողմ հայտարարության միջազգային-իրավական էությունը և դրա՝ որպես իրավական փաստաթղթի՝ իրավաբանական ուժի հետ կապված հիմնահարցերը: Բացի դրանից, հոդվածում վերլուծվել են եռակողմ հայտարարության յուրաքանչյուր կետի գործնականում կիրառության աստիճանը և այդ դրութների գործնականում չկիրառման դեպքերը: Այդ

* Հոդվածը ներկայացվել է 09.05.2023թ., գրախոսվել՝ 13.07.2023թ., տպագրության ընդունվել՝ 31.07.2023թ.:

նպատակով ուսումնասիրվել են միջազգային համապատասխան իրավական ակտեր ու տեսական գրականություն, ինչպես նաև միջազգային դատական ատյանների վճիռներ, մի շարք զեկույցներ և փորձագիտական կարծիքներ:

Հետազոտության իրականացման ընթացքում հեղինակների կողմից կիրառվել են ինչպես համագիտական (անալիզ, պատմականության սկզբունք), այնպես էլ հատուկ (համեմատական-իրավական) սկզբունքներ:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացությանը, որ Եռակողմ հայտարարության իրավաբանական ուժի հետ կապված տարակարծություններն իրական են, և առկա է Ադրբեջանի կողմից Եռակողմ հայտարարության կետերի կոպտագույն խախտումների և այդ կետերի ոչ պատշաճ կատարում:

Հիմնաբառեր՝ *Արցախի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետություն, Ադրբեջան, եռակողմ հայտարարություն, միջազգային պայմանագրերի իրավունք, Վիեննայի կոնվենցիա, «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենք, ՌԴ խաղաղապահ զորակազմ, միջազգային պարտավորության կատարում:*

Նախաբան

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից՝ Թուրքիայի անմիջական մասնակցությամբ և օտարերկրյա զինյալ ահաբեկիչների ներգրավմամբ Արցախի Հանրապետության և նրա ժողովրդի դեմ սանձազերծված ռազմական ագրեսիան կանգնեցնելու նպատակով 2020 թ. նոյեմբերի 9-ին ՌԴ նախագահի միջնորդությամբ ստորագրվեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում հրադադարի և բոլոր ռազմական գործողությունների ավարտի մասին եռակողմ հայտարարություն (Заявление Президента Азербайджанской Республики, Премьер-министра Республики Армения и Президента Российской Федерации), որի հիման վրա Արցախում տեղակայվեցին ՌԴ խաղաղապահ ուժեր:

Ստորագրված եռակողմ հայտարարությունն իր քաղաքական նշանակությամբ, իրավաբանական ուժով և դրանից բխող իրավաքաղաքական և այլ հետևանքներով փորձագիտական շրջանակներում առաջացնում է լուրջ տարակարծություններ: Այդ նպատակով տեղին է ներկայացնել հետևյալ մոտեցումները.

1. 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունն իր բովանդակած նորմերի ուժով և դրանով կարգավորվող հարաբերությունների բնույթով իրավական տեսանկյունից ոչ թե «հայտարարություն» է, այլ լիովին համապատասխանում է միջազգային իրավունքում միջազգային պայմանագրերին տրված բնորոշմանը: Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969 թ. կոնվենցիայի 2-րդ հոդվածը տալիս է միջազգային պայմանագրի բնորոշումը: Ըստ այդմ՝ *«պայմանագիր» նշանակում է պետությունների միջև գրավոր ձևով կնքված և միջազգային իրավունքով կարգավորվող միջազգային համաձայնություն, անկախ նրանից, այդ համաձայնությունը պարունակվում է մեկ կամ երկու կամ միմյանց հետ կապված մի քանի փաստաթղթերում, ինչպես նաև անկախ դրա կոնկրետ անվանումից*» (Կոնվենցիա միջազգային պայմանագրերի իրավունքի մասին): Այս բնորոշումից պարզորեն երևում է, որ այդ «հայտարարությունը» միջազգային պայմանագրի տիպիկ օրինակ է և «հայտարարություն» անվանվել է միայն միջազգային պայմանագրի վավերացվելուց հետո իրավաբանական ուժի մեջ մտնելու իրավական պահանջը շրջանցելու համար: Ուստի այն չի վավերացվել հիշյալ երկրների օրենսդիր մարմինների կողմից, Սահմանադրական դատարանը դրա սահմանադրականության մասին որոշում չի կայացրել, հետևաբար այն չի կարող ունենալ իրավաբանական ուժ:

2. Ըստ միջազգային իրավունքի՝ պայմանագրերը կարող են ունենալ տարբեր անվանումներ (օրինակ՝ համաձայնագիր, կոնվենցիա, պայմանագիր,

արձանագրություն, հռչակագիր, կանոնադրություն և այլն) կամ չունենալ: Հետևաբար 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունը չունի որևէ իրավաբանական ուժ, քանի որ ունենալով միջազգային պայմանագրի տարրեր՝ չի վավերացվել որևէ կողմի կողմից: ՀՀ միջազգային պայմանագրերի մասին օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ *«Հայաստանի Հանրապետության ստորագրած կամ միանալու ենթակա միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության համար պարտադիր իրավաբանական ուժ է ստանում անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն ավարտելուց հետո Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացվելու կամ Հանրապետության նախագահի կողմից հաստատվելու միջոցով» («Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենք)*:

Այս ամենի համատեքստում Ադրբեջանը, նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության դրույթներին չհետևելով, կարծես թե այն չի դիտում որպես միջազգային պայմանագիր, այլ՝ ինչ-որ քաղաքական հայտարարություն: Ինչպես արդեն նշել ենք, նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունը իր բնույթով և իրավաբանական նշանակությամբ լիովին համահունչ է միջազգային պայմանագրի բնորոշմանը: Հետևաբար, ի տարբերություն քաղաքական հայտարարությունների, որոնք որևէ իրավական հետևանքներ չեն առաջացնում, միջազգային պայմանագրերը հստակորեն ուղղված են այս կամ այն կոնկրետ իրավահարաբերությունների կարգավորմանը, և որի դրույթների չկատարումը առաջացնում է լուրջ իրավական հետևանքներ՝ ընդհուպ մինչև միջազգային իրավական պատասխանատվության:

3. 2020 թ. 44-օրյա պատերազմում ՀՀ չէր հանդիսանում զինված հակամարտության կողմ: Հետևաբար կրակի դադարեցման մասին ցանկացած համաձայնագրի կողմ պետք է լինի ոչ թե ՀՀ, այլև Արցախի Հանրապետությունը՝ որպես զինված հակամարտության մասնակից: Այս առումով որպես նախադեպ կարող էր հանդիսանալ Բիշքեկյան համաձայնագիրը: Այն ևս լիովին համարվում է միջազգային պայմանագիր: Այն ուժի մեջ է մտել 1994 թ. մայիսի 12-ին Ռուսաստանի Դաշնության միջնորդական ջանքերի շնորհիվ և կրակի և ռազմական գործողությունների լիակատար դադարեցման մասին անժամկետ եռակողմ համաձայնագիր է, որ ստորագրվել է Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության, Ադրբեջանի և Հայաստանի կողմից (Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հայտարարություն): Իրավական առումով Արցախի Հանրապետության մասնակցությունը՝ որպես Արցախի Հանրապետության ճակատագիրը կանխորոշողի, ամեն դեպքում, ճիշտ էր, քանի որ Արցախի Հանրապետությունը, ի դեմս իր բնակչության, իր ինքնորոշման իրավունքի իրագործողն է, և կարելի է դիտարկել որպես միջազգային իրավունքի սուբյեկտ: Հետևաբար Արցախյան երրորդ պատերազմի ավարտի վերաբերյալ ցանկացած փաստաթուղթ, անկախ միջազգայնորեն ճանաչված լինելու-չլինելու հանգամանքից, պետք է ստորագրվեր պատերազմի կողմ հանդիսացող Արցախ Հանրապետության, այլ ոչ թե պատերազմի կողմ չհանդիսացող Հայաստանի Հանրապետության հետ:

3. Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969 թ. կոնվենցիայի 52-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագիրը համարվում է առոչինչ, եթե կնքված է ուժի սպառնալիքի կամ այն կիրառելու միջոցով Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ ամրագրված միջազգային իրավունքի սկզբունքների խախտմամբ: 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունը կնքվել է հենց ուժի սպառնալիքի կամ այն կիրառելու ներքո, քանի որ արդեն դրված էր Արցախի և արցախահայության ամբողջական բնաջնջման հարցը: Պատմությանը հայտնի են միջազգային պայմանագրերի նմանատիպ բազմաթիվ օրինակներ: Ռազմական գործողությունների դադարեցման և խաղաղության հաստատմանն ուղղված միջազգային պայմանագրերի օրինակներ են 1945 թ. Գերմանական զինված ուժերի անվերապահ կապիտուլյացիայի ակտը (Акт о безоговорочной капитуляции Германии (7 мая 1945)), 1978 թ. Քեմփ-Դեյվիդի համաձայնագիրը և վերջինիս հիման

վրա 1979 թ. կնքված Եգիպտահիսրայելական հաշտության պայմանագիրը (Peace treaty between Israel and Egypt), 2015 թ. Մինսկի երկրորդ համաձայնագիրը (Второе Минское соглашение) և այլն:

«Եռակողմ հայտարարությունը» Հայաստանի ներկայացուցչի կողմից ստորագրվել է այնպիսի պայմաններում, երբ ագրեսոր կողմը՝ ի դեմս Ադրբեջանի, փաստաթուղթը չստորագրելու դեպքում սպառնում էր շարունակել ռազմական ագրեսիան Արցախի դեմ, ինչից հետևում է, որ ստորագրված փաստաթուղթը, միջազգային իրավունքի տեսանկյունից, պարզապես օրինական համարվել չի կարող (Մարուքյան 14):

Բացի դրանից, Վիեննայի պայմանագրի 51-րդ հոդվածը պարունակում է նաև մեկ այլ նորմ, ըստ որի՝ պայմանագրով պարտավորված լինելու՝ պետության համաձայնության արտահայտումը վերջինիս ներկայացուցչին հարկադրելու արդյունքում վերջինիս դեմ ուղղված գործողությունների կամ սպառնալիքների միջոցով որևէ իրավական հետևանք չունի:

Հայտարարության ստորագրումից անցել է ավելի քան երկուսուկես տարի, սակայն դրա դրույթները լիովին իրագործված չեն, և դա ի վնաս հայկական կողմի, իսկ իրագործված մասը մեծապես վնաս է հասցրել ինչպես հայոց պետականությանը, այնպես էլ քաղաքացիների անվտանգությանը: Ստորև կանդրադառնանք Հայտարարության հոդվածներից յուրաքանչյուրի իրագործվածության աստիճանին՝

1. Հայտարարվում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում ամբողջական հրադադարի և ռազմական բոլոր գործողությունների դադարի մասին՝ 2020 թվականի նոյեմբերի 10-ի՝ Մոսկվայի ժամանակով ժամը 00:00-ից Ադրբեջանի Հանրապետությունը և Հայաստանի Հանրապետությունը, այսուհետ՝ Կողմեր, կանգ են առնում իրենց զբաղեցրած դիրքերում:

Կարող ենք արձանագրել, որ այս դրույթը սկզբից որոշ չափով պահպանվում էր, սակայն տևական ժամանակ է՝ Ադրբեջանը պլանավորված խախտում է հրադադարի ռեժիմը՝ ամեն անգամ օգտագործելով ավելի կոշտ գործիքակազմ: Որպես օրինակ կարող է ծառայել այն, որ ադրբեջանական ագրեսիայի հետևանքով թշնամու բռնազավթման տակ են անցել Արցախի Հանրապետության Հադրութի շրջանի Խծաբերդ և Հին թաղեր, Ասկերանի շրջանի Փառուխ գյուղի շրջակայքը և Քարագլուխ նախկին բնակավայրն ու համանուն բարձունքի մի մասը:

Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանը, մեկնաբանելով Ադրբեջանի մարդու իրավունքների պաշտպանի կողմից Արցախի դեմ Ադրբեջանի հանցավոր գործողությունները արդարացնելու հայտարարությունները, նշել է, որ «Ադրբեջանի մարդու իրավունքների հանձնակատարը աչք է փակում 2020 թվականի պատերազմի ավարտից հետո եռակողմ հայտարարության խախտումների վրա, որոնք հանգեցրել են Խծաբերդի և Հին թաղերի, Քարագլխի և Փարուխի ռազմական ագրեսիային և օկուպացիային, 21 մարդու, այդ թվում՝ 3 խաղաղ բնակիչների դիտավորյալ սպանությանը, ադրբեջանական զինուժի կողմից արցախցիներին գերեվարելու դեպքերի և ավելի քան 100 սպանության փորձերի: Պարադոքսալ է, բայց Ադրբեջանի իրավապաշտպան հաստատության ձայնը չլսվեց, երբ 2021 թ. հոկտեմբերի 9-ին Մարտակերտում՝ սեփական նռան այգում, ադրբեջանցի դիպուկահարի կրակոցից սպանվեց 55-ամյա Արամ Տեփնանցը, որը իր տրակտորով սեզոնային գյուղատնտեսական աշխատանքներ էր կատարում: Սաբինա Ալիևայի ձայնը չլսվեց նաև, երբ 2021 թվականի նոյեմբերի 8-ին ադրբեջանցի զինծառայողը հարձակվեց Շուշիի տարածքում ջրատարի վերանորոգման աշխատանքներ կատարող մի խումբ քաղաքացիական անձանց վրա, ինչի հետևանքով գլխին ստացած կրակոցից զոհվեց 22-ամյա Մարտիկ Երեմյանը, իսկ երեք քաղաքացիական անձ՝ վիրավորվեց: Ի վերջո, Սաբինա Ալիևան հրապարակայնորեն որևէ մտահոգություն չարտահայտեց, երբ 2021 թվականի դեկտեմբերի 3-ին Մարտունու շրջանի Ճարտար համայնքի մոտ գյուղատնտեսական

աշխատանքներ կատարելիս 65-ամյա Սեյրան Սարգսյանը գերեվարվեց և սպանվեց ադրբեջանական զինուժի կողմից» (Պաշտպանի հայտարարությունը Ադրբեջանի մարդու իրավունքների հանձնակատարի կողմից տարածված ապատեղեկատվության վերաբերյալ):

2. Աղդամի շրջանը վերադարձվում է Ադրբեջանի Հանրապետությանը մինչև 2020 թվականի նոյեմբերի 20-ը:

Այս դրույթը, որքան էլ որ հակահայկական է, ամբողջությամբ իրագործվել է:

Ինչպես սույն, այնպես էլ 6-րդ կետում նշված Ակնայի, Քարվաճառի և Քաշաթաղի շրջանները «նվիրատվության տեսքով» Ադրբեջանին թղթի միջոցով հանձնելով՝ Հայաստանի քաղաքական իշխանությունն ակնհայտորեն գերազանցել է իր իրավասությունների սահմանները, ինչի մասին է վկայում Վիեննայի կոնվենցիայի 35-րդ հոդվածը՝ «Երրորդ պետության համար պայմանագրի դրույթից ծագում է պարտավորություն, եթե այդ պայմանագրի մասնակիցները մտադրություն ունեն այդ դրույթը պարտավորություն ստեղծելու միջոց դարձնել, և եթե երրորդ պետությունը գրավոր ձևով որոշակիորեն ստանձնում է այդ պարտավորությունները»:

Այստեղ ակնհայտ է, որ Արցախի Հանրապետությունը, որը հակամարտության երկրորդ կողմից պետք է դառնար առնվազն երրորդ կողմ, գրավոր ձևով որևէ համաձայնություն չի տվել, հետևաբար գործում է նույն Վիեննայի կոնվենցիայի 34-րդ կետը՝ «Պայմանագիրը երրորդ պետության համար պարտավորություններ կամ իրավունքներ չի ստեղծում առանց նրա համաձայնության»:

Ընդ որում, այս և 6-րդ կետում տեղ է գտել հայկական կողմի համար հետևյալ վտանգավոր միտքը. խոսքը «վերադարձվում» բառի մասին է, քանի որ ՀՀ քաղաքական իշխանությունը պետք է հասներ նրան, որ դրա փոխարեն գրվեր գոնե «ժամանակավոր փոխանցվում» բառը:

3. Լեռնային Ղարաբաղում շփման գծի երկայնքով և Լաչինի միջանցքի երկայնքով տեղակայվում է Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմ՝ թվով 1960 զինծառայող՝ հրաձգային զենքով, 90 զրահավոր փոխադրիչ մեքենա, 380 միավոր ավտոմոբիլային և հատուկ տեխնիկա:

Հիշյալ դրույթն իրագործվել է, սակայն կան խնդրահարույց մասեր՝ կապված թվաքանակի ավելացման հետ:

Այս համատեքստում հարկ է նշել, որ նախատեսված խաղաղապահ զորակազմի, որի շնորհիվ է պահպանվում թեկուզ փխրուն խաղաղությունը, թվաքանակը քիչ է՝ հաշվի առնելով Արցախի թեկուզ փոքր տարածքը, սակայն ադրբեջանական զինված ուժերի կողմից սահմանի տարբեր հատվածներում գրանցվող խախտումները: Միաժամանակ ռուս խաղաղապահների կողմից հաճախակի արձանագրված խախտումների հեղինակը, բնականաբար, ադրբեջանական կողմն է, սակայն խաղաղապահների կողմից հասցեական խոսք ու գործողություն գրեթե չի հետևում, ինչը նվազեցնում է նրանց հանդեպ առկա վստահությունը:

4. Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմը տեղակայվում է հայկական զինված ուժերի դուրսբերմանը զուգահեռ:

Հայտարարության ստորագրումից հետո Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմի՝ Արցախ մտնելուն զուգահեռ դուրս է բերվել հայկական զինված ուժերը, ինչն անվտանգային առումով թուլացրել է Արցախի պաշտպանունակության մակարդակը:

Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմի գտնվելու ժամկետը կազմում է 5 տարի՝ հերթական 5-ամյա ժամկետներով ավտոմատ կերպով երկարաձգմամբ, եթե Կողմերից որևէ մեկը ժամկետի ավարտից 6 ամիս առաջ չհայտարարի սույն դրույթի կիրառումը դադարեցնելու մտադրության մասին:

Ինչպես հայտնի է, մինչ օրս ադրբեջանական կողմը չի ստորագրել ռուսական խաղաղապահ զորակազմի մանդատը, որն անորոշություն է մտցնում նրանց

երկարաժամկետ մնալու հարցում: Միաժամանակ, Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը բազմիցս հայտարարել է, որ ռուսական խաղաղապահ զորակազմի մնալու անհրաժեշտությունը չկա, և իրենք կարող են երկխոսություն սկսել Արցախի բնակչության հետ:

5. Հակամարտության Կողմերի կողմից պայմանավորվածությունների կատարման նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ստեղծվում է հրադադարի վերահսկողության խաղաղապահ կենտրոն:

Այս կենտրոնը ստեղծվել է, բայց կատարված աշխատանքի արդյունավետության մասին հնարավոր չէ խոսել, քանի որ Ադրբեջանի կողմից հրադադարի պահպանման ռեժիմի դեպքերի կապակցությամբ չեն ձեռնարկում անհրաժեշտ միջոցառումներ:

Այս կենտրոնի աշխատանքներին ներգրավված է Թուրքիան, որն ուղղակի առնչություն չունի ո՛չ Արցախի, ո՛չ էլ հակամարտության հետ, սակայն հենց նրա հովանավորությամբ ու աջակցությամբ է Ադրբեջանը պատերազմի ժամանակ հասել որոշակի հաջողությունների և ներկայումս էլ կենտրոնի միջոցով վերահսկողություն է իրականացնում:

6. Հայաստանի Հանրապետությունն Ադրբեջանի Հանրապետությանը վերադարձնում է Քելբաջարի շրջանը՝ մինչև 2020 թվականի նոյեմբերի 15-ը, իսկ Լաչինի շրջանը՝ մինչև 2020 թվականի դեկտեմբերի 1-ը: Լաչինի միջանցքը (5 կմ լայնությամբ), որն ապահովելու է Լեռնային Ղարաբաղի կապը Հայաստանի հետ և միաժամանակ շրջանցելու է Շուշի քաղաքը, մնում է Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմի վերահսկողության ներքո:

Այս դրույթը ամբողջությամբ իրագործվել է, սակայն կան մի շարք խնդիրներ, որոնք կրում են սպառնալիքային բնույթ:

Այս կետի շրջանակներում կարևոր է առանձնացնել այն հակահայկական ձևակերպումը, որի համաձայն՝ ՀՀ-ն չուներ և չէր կարող ունենալ լիազորություն Ադրբեջանին վերադարձնելու Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ պետության տարածքի որոշ շրջաններ: Սա նշանակում է, որ ՀՀ քաղաքական իշխանությունը, չունենալով Արցախի Հանրապետության օրինական իշխանության կողմից նման լիազորություն՝ այդպիսին չէր կարող լինել, քանի որ տարածքի հետ կապված հարցերը լուծվում են հանրաքվեի եղանակով, Ադրբեջանին է հանձնել իրեն չպատկանող և այդ տարածքների վրա որևէ իրավազորություն չունեցող շրջաններ: Սա նշանակում է, որ տեղի է ունեցել պաշտոնատար անձի կողմից լիազորությունների չարաշահում, ինչպիսի պատիժ սահմանված է ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածով:

Արցախի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածով երկիր հռչակված է որպես ինքնիշխան պետություն: Անկախ երկրի միջազգայնորեն դեռևս չճանաչված լինելու հանգամանքից՝ Հայաստանի Հանրապետությունը չէր կարող ստանձնել միջազգային պարտավորություն և Արցախի անունից ստորագրեր այդ փաստաթուղթը:

Դրանից զատ, Արցախի Հանրապետության Սահմանադրության 94-րդ հոդվածում սահմանված են Հանրապետության նախագահի լիազորությունները ազգային անվտանգության բնագավառում, որի 1-2-րդ մասերի համաձայն՝

1. Հանրապետության նախագահը Արցախի Հանրապետության ինքնիշխանության, անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է:

2. Հանրապետության նախագահը զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է:

Համակարգային վերլուծության արդյունքում կարելի է եզրահանգել, որ Արցախի Հանրապետության նախագահը չի օգտվել Սահմանադրության 94-րդ հոդվածում իրեն վերապահված բացառիկ լիազորություններից կամ դրսևորել է անգործություն:

Այս համատեքստում հարկ է հիշատակել հետևյալ հակասական մոտեցումները. 2019 թ. օգոստոսի 5-ին ելույթ ունենալով Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում՝ Հայաստանի Հանրապետության վարչապետն ասել է, որ «Արցախը Հայաստան է և վերջ» (ՀՀ վարչապետի ելույթ, Արցախը Հայաստան է և վերջ), իսկ ահա նույն անձը 2020 թ. դեկտեմբերի 21-ին սիսիանցիների հետ հանդիպման ընթացքում նշել է, որ «Տեղ գյուղից այն կողմ Ադրբեջանն է» («Տեղ գյուղից այն կողմ Ադրբեջանն է». Փաշինյանը սիսիանցիներին ներկայացրեց սահմանների խնդիրը):

Ի դեպ, «Եռակողմ հայտարարության» 2-րդ և 6-րդ հոդվածների՝ Արցախի Հանրապետության Քարվաճառի, Քաշաթաղի և Ակնայի շրջաններն Ադրբեջանին փոխանցելու դրույթները հակասում են նույն փաստաթղթի 1-ին հոդվածի պահանջին, որի համաձայն՝ պատերազմող կողմերը պետք է մնային տվյալ պահին իրենց զբաղեցրած դիրքերում, իսկ պատերազմի ավարտի պահին նշված շրջանները գտնվում էին հայկական ուժերի հսկողության ներքո, հետևաբար «Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում բոլոր ռազմական գործողություններն ամբողջովին դադարեցնելու մասին» հայտարարության տրամաբանությամբ դրանք հակառակորդին չպետք է հանձնվեին (Մարուքյան 16):

Եթե Ադրբեջանի պահանջով փոխանցվել են վերոհիշյալ շրջանները, ապա ՀՀ-ից բանակցողը և ստորագրողը պետք է առնվազն պահանջեր նախկին ԼՂԻՄ-ի և Մարտակերտի, Մարտունու շրջանի որոշ տարածքներ, նաև Շահումյանի շրջանը վերադարձնելու հարցը, ինչը բնականաբար չի կատարվել և արցախահայությանը կանգնեցվել է գոյեբանական սպառնալիքի տակ, քանի որ բոլոր կողմերից զինված հրոսակներ են:

Պետք է նշել, որ Հայտարարության մեջ ամրագրված այս պայմանավորվա-ծությունը ներկայումս կոպտորեն խախտվում է: 2022 թվականի դեկտեմբերի 12-ից ադրբեջանական իշխանությունների հետ փոխկապակցված մի շարք անձինք, որոնք ներկայանում են իբր ադրբեջանցի էկոակտիվիստներ, փակել են Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհը՝ Լաչինի միջանցքը: Այդ ընթացքում Արցախում գնալով խորանում է հումանիտար ճգնաժամը, քանի որ այնտեղի բնակչությունը զրկված է Հայաստանից անհրաժեշտ քանակությամբ սննդամթերք, դեղորայք և վառելիք ստանալու հնարավորությունից (Report "The Azerbaijani government's " eco-activist" agents who blokated the only road of life connecting Artsakh to Armenia and the outside world"):

Այսպիսով, փակելով Լաչինի միջանցքը՝ Ադրբեջանը չի իրագործում իր կողմից ստանձնած միջազգային պարտավորությունները: Այդ կենսական ճանապարհի փակումը 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության ուղղակի և կոպիտ ոտնահարում է Ադրբեջանի կողմից այն պարզ հիմնավորմամբ, որ 6-րդ կետի համաձայն՝ Լաչինի միջանցքը գտնվում է Լեռնային Ղարաբաղում Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորախմբի վերահսկողության ներքո, իսկ Ադրբեջանը երաշխավորում է Լաչինի միջանցքով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների և բեռների երթևեկության անվտանգությունը:

Լաչինի միջանցքի ապաշրջափակման դիմումով՝ Հայաստանը դիմել էր Արդարադատության միջազգային դատարան: Հայաստանի կողմից ներկայացված հրատապ միջոցների առնչությամբ դատարանը գտել է, որ 2022 թվականի դեկտեմբերի 12-ից Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի միջև կապը Լաչինի միջանցքով խաթարվել է: Մասնավորապես, Արդարադատության միջազգային

դատարանը 2023 թվականի փետրվարի 22-ին սահմանել է. «Դատարանը հանգում է այն եզրակացության, որ Ադրբեջանը պետք է մինչև գործով վերջնական որոշում կայացնելը, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայով ստանձնած իր պարտավորություններին համապատասխան, ձեռնարկի իր իրավասության ներքո գտնվող բոլոր միջոցները՝ ապահովելու մարդկանց, տրանսպորտային միջոցների և բեռների անարգել տեղաշարժը Լաչինի միջանցքով երկու ուղղություններով» (APPLICATION OF THE INTERNATIONAL CONVENTION ON THE ELIMINATION OF ALL FORMS OF RACIAL DISCRIMINATION (ARMENIA v. AZERBAIJAN)):

Կողմերի միջև համաձայնեցմամբ՝ առաջիկա երեք տարիների ընթացքում սահմանվելու է Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի միջև կապն ապահովող Լաչինի միջանցքով նոր երթուղու կառուցման պլանը՝ այդ երթուղու պահպանության նպատակով ռուսական խաղաղապահ զորակազմի հետագա վերատեղակայմամբ:

Այս դրույթն իրագործվել է նույնիսկ ժամկետից շուտ, և 2022 թ. սեպտեմբեր ամսից Ստեփանակերտ-Գորիս երթուղին շրջանցում է Քաշաթաղի շրջկենտրոն Բերձորը և Աղավնո գյուղը:

Ադրբեջանի Հանրապետությունը երաշխավորում է Լաչինի միջանցքով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների և բեռների՝ երկու ուղղություններով տեղաշարժի անվտանգությունը:

Արցախի՝ 2022 թվականի դեկտեմբերի 12-ից սկսած ու ավելի քան 7 ամիս շարունակվող շրջափակումը ֆիզիկապես խոչընդոտում է Արցախ-Հայաստան կյանքի ճանապարհի բնականոն գործունեությանը: Արցախում ապրող 120,000-ից ավելի հայ, որից 30,000-ը՝ երեխա, մեկուսացման մեջ է, ինչի հետևանքով քաղաքացիները զրկված են հիմնարար իրավունքների իրացումից, այդ թվում՝ ազատ տեղաշարժվելու, բժշկական սպասարկման, կրթության և այլն:

7. Ներքին տեղահանված անձինք և փախստականները վերադառնում են Լեռնային Ղարաբաղի տարածք և հարակից շրջաններ՝ ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի վերահսկողության ներքո:

Այս կետի իրագործման հետ կապված որևէ տեղեկատվություն չկա:

Այս կետի տրամաբանությամբ Ադրբեջանի կողմից բռնազավթված և ժամանակավոր վերահսկողության տակ գտնվող Արցախի Հանրապետության տարածք կարող են վերադառնալ, օրինակ, առնվազն Հադրութի և Շուշիի բնակիչները, այնինչ նախ այդ մասին որևէ խոսք չկա, երկրորդ՝ լինելու դեպքում ոչ մի հայ չի համաձայնվի համատեղ ապրել ցեղասպանություն իրականացնողի հետ:

8. Իրականացվում է ռազմագերիների, պատանդների և այլ պահվող անձանց, ինչպես նաև զոհվածների մարմինների փոխանակում:

Հայտարարության այս կետը իրագործվել է մասամբ: Ադրբեջանը, խախտելով միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը և սկզբունքները, բազմիցս հրաժարվել է ռազմագերիների, պատանդների և այլ պահվող անձանց, ինչպես նաև զոհվածների մարմինների փոխանակումից: Կարծում ենք, որ այստեղ սխալ քաղաքականություն է վարել Հայաստանի Հանրապետության քաղաքական իշխանությունը, քանի որ կատարել է Ադրբեջանի բոլոր պահանջները, այնինչ պետք է վերջինից պահանջեր վերադարձնել ռազմագերիներին և նոր անցներ Հայտարարությամբ նշված պայմանավորվածության կատարմանը:

9. Ապաշրջափակվում են տարածաշրջանում բոլոր տնտեսական և տրանսպորտային կապերը: Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է Ադրբեջանի Հանրապետության արևմտյան շրջանների և Նախիջևանի Ինքնավար Հանրապետության միջև տրանսպորտային հաղորդակցության անվտանգությունը՝ քաղաքացիների, տրանսպորտային միջոցների և

բեռների՝ երկու ուղղություններով անխոչընդոտ տեղաշարժը կազմակերպելու նպատակով: Տրանսպորտային հաղորդակցության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում են Ռուսաստանի ԱԴԾ սահմանապահ ծառայության մարմինները:

Կողմերի միջև համաձայնեցմամբ՝ ապահովվելու է Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունն Ադրբեջանի արևմտյան շրջանների հետ կապող նոր տրանսպորտային հաղորդակցությունների շինարարությունը:

Այս ուղղությամբ բուռն քննարկումներ են տեղի ունենում, որին անուղղակիորեն ներգրավված է նաև հարևան Իրանը: Նույնիսկ անտրամաբանական է Լեռնային Ղարաբաղում կրակի դադարեցման մասին հայտարարության մեջ անդրադառնալ ինքնիշխան Հայաստանի Հանրապետության տարածքով, այսպես կոչված, «միջանցք» տրամադրելու հարցին, ինչի ենթադրյալ իրագործումը կհակասի ՀՀ Սահմանադրությանը:

Պետք է նաև նշել, որ Հայտարարության 9-րդ կետն առնչվում է Հայաստանի Հանրապետության տարածքին, որը երբեք Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացի քննարկման առարկա չի եղել, և դրա հետ կապված կարգավորման գործընթացում որևէ խնդիր չի ձևակերպվել ու քննարկվել:

Այդ հարցերը պետք է լուծվեն միայն միջազգային պայմանագրերով, որոնց համապատասխանությունը երկրի Սահմանադրությանը որոշում է սահմանադրական դատարանը, իսկ վավերացումը իրականացնում է խորհրդարանը: Հետևաբար Հայտարարության 9-րդ կետում արձանագրվածը չի կարող իրացվել այդ փաստաթղթի հիման վրա (Թորոսյան 8):

Եզրակացություն

1. Մինչև 2020 թվականի նոյեմբերի 9-ը տևած 44-օրյա պատերազմի համար Ադրբեջանը և նրա քաղաքական իշխանությունը պետք է պատասխանատվության ենթարկվեն իրենց կատարած միջազգային հանցագործությունների համար՝ անկախ այն հանգամանքից պատերազմը կորակվի որպես միջազգային կամ ոչ միջազգային զինված ընդհարում (Պետրոսյան 205-209): Ընդ որում, 2023 թվականի մարտի 24-ի ՍԴՈ-1680 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը «1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունում (Միջազգային քրեական դատարան: Փաստաթղթերի ժողովածու) ամրագրված պարտավորությունների՝ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» որոշել է, որ այն համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը, որի հիման վրա Հայաստանի՝ Միջազգային քրեական դատարանի անդամությամբ կզսպվեն պատերազմական հանցագործությունները (Հայաստանի՝ ՄՔԴ անդամությունով պատերազմական հանցագործությունները կզսպվեն):

2. Վերոշարադրյալից կարելի է եզրահանգել, որ Եռակողմ հայտարարությունը, որը միանշանակորեն Ադրբեջանի շահերից բխող, հետևաբար՝ հակահայկական փաստաթուղթ է, զուտ քաղաքական փաստաթուղթ է և իրավական առումով շատ հեռու է միջազգային պայմանագիր լինելուց: Հետևաբար, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հակամարտության կարգավորման միակ կարգավորման կառուցակարգը ցայսօր շարունակում է մնալ Մինսկի խմբի համանախագահների ձևաչափը՝ ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի և ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման միջազգային իրավունքի jus cogens սկզբունքների հիման վրա: Մի կողմից, Հայտարարությունը սահմանված ընթացակարգով չի ընդունվել, հետևաբար միջազգային պայմանագիր չէ, մյուս կողմից, Արցախյան 3-րդ պատերազմից հետո սա միակ «փաստաթուղթն» է, որը թեկուզ ոչ լիարժեքորեն, կարգավորում է հետպատերազմյան որոշ հարաբերություններ, սակայն ի շահ Ադրբեջանի:

3. Արցախյան հակամարտության կարգավորման հիմնախնդրով զբաղվող ԵԱՀԿ Մինսկի խումբը, որն ունի միջազգային ձևաչափ, ներկայացնում է երեք երկիր՝ ԱՄՆ, Ֆրանսիա և Ռուսաստան, սակայն միայն Ռուսաստանն է ներգրավված եղել Եռակողմ հայտարարության մշակման ու ընդունման գործընթացին, ինչը, մի կողմից, անհավասար վիճակ է ստեղծում համանախագահող երկրների միջև, մյուս կողմից, եթե Հայտարարության մշակման ու ստորագրման գործընթացին երեք երկրներն էլ ներգրավված լինեին, ապա կարծում ենք, որ Ադրբեջանի կողմից շարունակաբար դրսևորվող սանձարձակություններն այդ աստիճանի չէին լինի:

4. Հաշվի առնելով ադրբեջանական կողմի հախաճակի խախտումները և դրանք առնվազն ռուս խաղաղապահների ներկայությամբ զսպելու անհրաժեշտությունը՝ կարծում ենք, որ խաղաղապահ զորակազմի թվաքանակն ու զինտեխնիկայի քանակը պետք է շեշտակիորեն ավելացվեն, նաև ընդլայնվեն լիազորությունների շրջանակը:

5. Որևէ բացատրություն չկա այն մասին, որ հայտարարության այն կետերը, որոնք պետք է կատարեր հայկական կողմը, անմիջականորեն ի կատար են ածվել, իսկ որոնք պետք է կատարվեին Ադրբեջանի կողմից՝ կա՛մ չեն կատարվել, կա՛մ էլ անհիմն կերպով ձգձգվում են, ինչը պայմանավորված է նաև Հայաստանի ռազմաքաղաքական ու դիվանագիտական ոլորտի պատասխանատուների անհետևողական և զիջողական քաղաքականությամբ:

6. Եռակողմ հայտարարության կետերից միայն 1-ին, 5-րդ և 8-րդ կետերն են վերաբերում կրակի դադարեցմանը, մնացածը վերաբերում են կա՛մ Արցախյան հակամարտության կարգավորմանը, կա՛մ առչնվում են ինքնիշխան Հայաստանի Հանրապետության ներքին կյանքին (իմա՝ միջանցքին), ինչպիսի լիազորությամբ կողմերն օժտված չէին:

Բացի դրանից, Հայտարարությունը չի շոշափում նաև ԵԱՀԿ-ն և, այսպես կոչված, Մինսկի խումբը, որը ստեղծվել է «ղարաբաղյան հակամարտության» կարգավորմանը նպաստելու համար: Դրա հետևանքով Մինսկի խմբի համանախագահները, այսինքն՝ Ֆրանսիան, Ռուսաստանը և ԱՄՆ-ը, ինչպես նաև ԵԱՀԿ-ի կողմից համանախագահներին վերապահված մանդատն ու գործառույթները մնում են անփոփոխ: ԵԱՀԿ-ի կամ Մինսկի խմբի հիշատակման բացակայությունը հատկապես ուշագրավ է իրավական, ինչպես նաև քաղաքական տեսանկյունից, քանի որ հրադադարի մասին համաձայնագրի 7-րդ կետում ուղղակիորեն հիշատակվում է մեկ այլ միջազգային կազմակերպություն, այն է՝ ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը (UNHCR): Համաձայնագիրը հանձնարարում է նրան վերահսկել և կառավարել «ներքին տեղահանված անձանց և փախստականների վերադարձը Լեռնային Ղարաբաղի և հարակից շրջանների տարածք» (Лухтерхандт 2-3):

7. Փաստորեն ստացվում է, որ Ադրբեջանը չհայտարարված պատերազմ է սկսել միայն Արցախի Հանրապետության դեմ, իսկ Հայտարարության 1-ին և 6-րդ կետերում ՀՀ-ն ներկայացվում է որպես պատերազմական գործողության կողմ, այնինչ Արցախյան հակամարտությանը վերաբերող որևէ իրավական փաստաթղթում նշված չէ, որ Հայաստանը պատերազմող կողմ է. վերջինս հանդես է գալիս որպես Արցախի անվտանգության երաշխավոր: Այս համատեքստում իրավունքի և օրենքի իմաստով անտրամաբանական է ՀՀ վարչապետի կողմից իրեն նման լիազորությամբ օժտելը, որը պետք է իրացներ Արցախի Հանրապետության նախագահը: Ընդհանրացված կարելի է ասել, որ անուշադրության են մատնվել կամ արհամարհվել են հայկական երկու հանրապետությունների սահմանադրությունները:

8. Ադրբեջանը, ՀՀ քաղաքական իշխանությանը ստիպելով ստորագրել կապիտուլյացիայի ակտի տակ, «մի կրակոցով երկու նապաստակ որսալու» սկզբունքով կրակի դադարեցման հետ միաժամանակ օրակարգ բերեց միջանցքի հարցը և մինչ օրս հետևողականորեն առաջ է մղում իր այդ վաղեմի ծրագրի իրագործումը: Չի բացառվում նաև, որ նման պարտվողական քայլը մեկնաբանվի

իբրև թե թշնամի երկրի սպառնալիքը նվազեցնելու կամ չեզոքացնելու փորձ, այնուամենայնիվ, հարցի սահմանադրաիրավական կարգավորումներն այլ են:

9. Պատերազմից առաջ և հետո Ադրբեջանի կողմից դրսևորվող հակահայկական ու ահաբեկչական քաղաքականությունը և միջազգային հանրության կողմից այդ ամենին անհամարժեք արձագանքն ու գործողություններն ակնհայտորեն վկայում են այն մասին, որ միջազգային իրավունքը վաղուց ապացուցել է, որ ստեղծվել է ուժեղների համար և գործում է ընտրողաբար ու նրանց շահերից ելնելով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հայտարարությունը, http://www.nkr.am/hy/news/2021-05-12/may-12: Հասանելի է՝ 13.05. 2023:
2. Թորոսյան, Տիգրան. *Դիվանագիտական լուծում կա. Լեռնային Ղարաբաղի կարգավորման հնարավորություններն ու հեռանկարները 2020 թվականի պատերազմից հետո*, Լույս հիմնադրամ, 13 դեկտեմբերի 2020, 18 էջ:
3. Հայաստանի՝ ՄՔԴ անդամությունով պատերազմական հանցագործությունները կզսպվեն, *YouTube,* https://www.youtube.com/watch?v=6o_GIbhamkk: Հասանելի է՝ 25.04. 2023:
4. Միջազգային քրեական դատարան: Փաստաթղթերի ժողովածու: Պաշտոնական հայերեն թարգմանություն/ Թարգմանիչներ՝ Վլադիմիր Հովհաննիսյան, Լիանա Հակոբյան, «Հույս և սեր» հրատ., Երևան, 2005, 256 էջ:
5. Պաշտպանի հայտարարությունը Ադրբեջանի մարդու իրավունքների հանձնակատարի կողմից տարածված ապատեղեկատվության վերաբերյալ, https://artsakhombuds.am/hy/news/713, Հասանելի է՝ 10 մարտի 2023:
6. Պետրոսյան, Գուրգեն. *Միջազգային քրեական իրավունք*, Ուսումնական ձեռնարկ: Եր., ԵՊՀ հրատ., 2021, 342 էջ:
7. Միավորված ազգերի կազմակերպություն. *Կոնվենցիա միջազգային պայմանագրերի իրավունքի մասին*. 23 մայիսի, 1969. https://www.arlis.am/documentview.aspx?docID=24526
8. ՀՀ վարչապետի ելույթ, Արցախը Հայաստան է և վերջ, https://www.civilnet.am/news/192977/%D5%A1%D6%80%D6%81%D5%A1%D5%AD%D5%A8-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6-%D5%A7-%D6%87-%D5%BE%D5%A5%D6%80%D5%BB/: Հասանելի է՝ 04.07.2023:
9. Մարուքյան, Արմեն. *2020 թ. նոյեմբերի 9-ի «Լեռնային Ղարաբաղում կրակի դադարեցման մասին եռակողմ հայտարարության» իրավաքաղաքական վերլուծություն, «Դոշակ» ամսաթերթ Հայ Յեղափոխական Դաշնակցության* պաշտոնաթերթ, նոյեմբեր 2021, էջ 12-19:
10. ՀՀ Ազգային ժողով. *Միջազգային պայմանագրերի մասին ՀՀ օրենք.* 23 մարտի, 2018. https://www.arlis.am/documentview.aspx?docID=120816
11. «Տեղ գյուղից այն կողմ Ադրբեջանն է». Փաշինյանը սիսիանցիներին ներկայացրեց սահմանների խնդիրը, https://armeniasputnik.am/20201221/tex-gyuxic-ayn-koxm-adrbejann-e-25835656.html:Հասանելի է՝ 04.07.2023:
12. Акт о безоговорочной капитуляции Германии (7 мая 1945), https://clck.ru/35KTtn. Доступно: 02.07.23.
13. Второе Минское соглашение, https://ru.wikipedia.org/wiki/%D0%92%D1%82%D0%BE%D1%80%D0%BE%D0%B5_%D0%BC%D0%B8%D0%BD%D1%81%D0%BA%D0%BE%D0%B5_%D1%81%D0%BE%D0%B3%D0%BB%D0%B0%D1%88%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B. Доступно: 02.07.23.

14.Заявление Президента Азербайджанской Республики, Премьер-министра Республики Армения и Президента Российской Федерации, http://kremlin.ru/events/president/news/64384. Доступно: 01.02.2023.

15.Лухтерхандт, Отто. *Некоторые приоритетные стратегические задачи по обеспечению статуса Республики Арцах/Нагорного Карабаха* (Доклад на конференции 18/19 сентября 2021 года в Степанакерте/Республика Арцах по общей теме конференции "30 лет независимости Нагорного Карабаха/Арцаха), стр. 10:

16.APPLICATION OF THE INTERNATIONAL CONVENTION ON THE ELIMINATION OF ALL FORMS OF RACIAL DISCRIMINATION (ARMENIA v. AZERBAIJAN), https://www.icj-cij.org/sites/default/files/case-related/180/180-20230222-ORD-01-00-EN.pdf. Accessed 04.06.23.

17.Peace Treaty between Israel and Egypt, https://web.archive.org/web/20040811091446/http://www.mfa.gov.il/MFA/Peace%20Process/Guide%20to%20the%20Peace%20Process/Israel-Egypt%20Peace%20Treaty. Accessed 02.07.23.

18.Report "The Azerbaijani Government's "Eco-activist" Agents who Blokated the Only Road of Life Connecting Artsakh to Armenia and the Outside World", https://artsakhombuds.am/en/document/995. Accessed 02.07.23.

WORKS CITED

1. Arcaxi Hanrapetut'yan artaqin gorc'eri naxararut'yan haytararut'yuny' [Statement by the Ministry of Foreign Affairs of the Republic of Artsakh], http://www.nkr.am/hy/news/2021-05-12/may-12, 13.03.2023. (in Armenian)

2. T'orosyan T., Divanagitakan luc'um ka. Ler'nayin Gharabaghi kargavorman hnaravorut'yunnern u her'ankarnery' 2020 t'vakani paterazmic heto [There is a Diplomatic Solution. Possibilities and Prospects for a Nagorno-Karabakh Settlement after the 2020 War], 2020t'. dektemberi 13, 18 e'j (in Armenian)

3. Hayastani` MQD andamut'yunov paterazmakan hancagorc'ut'yunnery' kzspven [With Armenia's Membership in the ICC, War Crimes will be Curbed], 20.03.2023, https://www.youtube.com/watch?v=6o_Glbhamkk, hghman amsat'ivy'` 25.03.2023t'. (in Armenian)

4. Mijazgayin qreakan dataran: P'astat'ght'eri jhoghovac'u: Pashtonakan hayeren t'argmanut'yun [International Criminal Court. Collection of Documents. Official Armenian Translation]/ T'argmanichner` Vladimir Hovhannisyan, Liana Hakobyan, «Huys ev ser» hrat., Erevan, 2005, 256 e'j. (in Armenian)

5. Pashtpani haytararut'yuny' Adrbejani mardu iravunqneri hand'nakatari koghmic tarac'vac' apateghekatvut'yan veraberyal [Statement by the Defender Regarding Misinformation Disseminated by the Human Rights Ombudsman of Azerbaijan], https://artsakhombuds.am/hy/news/713, 10.03.2023t'. (in Armenian)

6. Petrosyan Gurgen, Mijazgayin qreakan iravunq: Usumnakan d'er'nark [International Criminal Law. Textbook]: Er., EPH hrat., 2021, 342 e'j. (in Armenian)

7. Konvencia mijazgayin paymanagreri iravunqi masin [Convention on the Law of Treaties], https://www.arlis.am/documentview.aspx?docID=24526, 01.02.2023. (in Armenian)

8. HH varchapeti eluyt', Arcaxy' Hayastan e' ev verj [Statement by the Prime Minister of the Republic of Armenia, Artsakh is Armenia and that's it.], https://www.civilnet.am/news/192977/%D5%A1%D6%80%D6%81%D5%A1%D5%AD%D5%A8-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6-%D5%A7-%D6%87-%D5%BE%D5%A5%D6%80%D5%BB/, 04.07.23: (in Armenian)

9. Maruqyan, Armen. 2020 t'. noyemberi 9-i «Ler'nayin Gharabaghum kraki dadarecman masin er'akoghm haytararut'yan» iravaqaghaqakan verluc'ut'yun [Political

and Legal Analysis of the "Tripartite Statement on Ceasefire in Nagorno-Karabakh" of November 9, 2020], «Dro'shak» amsat'ert' Hay Yeghap'oxakan Dashnakcut'yan pashtonat'ert', noyember 2021, e'j 12-19. (in Armenian)

10. «Mijazgayin paymanagreri masin» HH o'renq [Law of the Republic of Armenia "On International Treaties"], https://www.arlis.am/documentview.aspx? docID=120816, 01.02.2023. (in Armenian)

11. «Tegh gyughic ayn koghm Adrbejann e'». P'ashinyany' sisiancinerin nerkayacrec sahmanneri xndiry' ["On the other side of Tegh village is Azerbaijan". Pashinyan Presented the Issue of Borders to Sisians], https://armeniasputnik.am/20201221/tex-gyuxic-ayn-koxm-adrbejann-e-25835656.html, 04.07.23. (in Armenian)

12. Akt o bezogovorochnoj kapituljacii Germanii (7 maja 1945) [Act of Unconditional Surrender of Germany (May 7, 1945)], https://clck.ru/35KTtn, 02.07.23. (in Russian)

13. Vtoroe minskoe soglashenie [Second Minsk Agreement], https://ru.wikipedia.org/wiki/%D0%92%D1%82%D0%BE%D1%80%D0%BE%D0%B5_%D0%BC%D0%B8%D0%BD%D1%81%D0%BA%D0%BE%D0%B5_%D1%81%D0%BE%D0%B3%D0%BB%D0%B0%D1%88%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B, 02.07.23. (in Russian)

14. Zajavlenie Prezidenta Azerbajdzhanskoj Respubliki, Prem'er-ministra Respubliki Armenija i Prezidenta Rossijskoj Federacii [Statement by the President of the Republic of Azerbaijan, the Prime Minister of the Republic of Armenia and the President of the Russian Federation], http://kremlin.ru/events/president/news/64384, 01.02.2023. (in Russian)

15. Luhterhandt O., Nekotorye prioritetnye strategicheskie zadachi po obespecheniju statusa Respubliki Arcah/Nagornogo Karabaha (Doklad na konferencii 18/19 sentjabrja 2021 goda v Stepanakerte/Respublika Arcah po obshhej teme konferencii "30 let nezavisimosti Nagornogo Karabaha/Arcaha) [Some strategic priorities for the status of the Republic of Artsakh/Nagorno-Karabakh (Report to the conference on September 18/19, 2021 in Stepanakert/Republic of Artsakh on the general theme of the conference "30 Years of the Independence of Nagorno-Karabakh/Artsakh")], 10 Էջ. (in Russian)

16. APPLICATION-OF-THE-INTERNATIONAL-CONVENTION-ON-THE-ELIMINATION-OF-ALL-FORMS-OF-RACIAL-DISCRIMINATION-(ARMENIA-v.-AZERBAIJAN),-https://www.icj-cij.org/sites/default/files/case-related/180/180-20230222-ORD-01-00-EN.pdf-,-04.06.23.

17. Peace Treaty between Israel and Egypt, https://web.archive.org/web/20040811091446/http://www.mfa.gov.il/MFA/Peace%20Process/Guide%20to%20the%20Peace%20Process/Israel-Egypt%20Peace%20Treaty,-02.07.23.

18. Report "The Azerbaijani Government's "Eeco-activist" Agents who Blokated the Only Road of Life Connecting Artsakh to Armenia and the Outside World", https://artsakhombuds.am/en/document/995-,-02.07.23.

LEGAL FORCE AND IMPLICATIONS OF THE TRIPARTITE STATEMENT «ON CEASEFIRE IN NAGORNO-KARABAKH» OF NOVEMBER 9, 2020

AVETIK HARUTYUNYAN
Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA), Founder-Chairman;
«Artsakh» Research Institute, Director;
«Scientific Artsakh» Journal, Editor-in-Chief;
Chamber of Advocates of the Republic of Armenia, Advocate;
«AVE JUS» Law Firm, Founder,
Ph.D. in Law, Associate Professor,
Stepanakert, the Republic of Artsakh

MARIAM GRIGORYAN
Assistant to the President of the Republic of Artsakh,
Stepanakert Mesrop Mashtots University, Lecturer;
Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA), Member,
Stepanakert, the Republic of Artsakh

The 44-day Artsakh war ended with the tripartite statement signed on November 9, 2020 between Armenia, Azerbaijan and Russia. The signed tripartite statement, with its political significance, legal force and the political-legal and other consequences arising from it, arouses serious disagreements and contradictory views in various political and academic circles.

The aim of the article is to examine and identify the international legal essence of the signed tripartite declaration and the issues related to the legal force of this legal instrument. In addition, the article analyzed the extent to which each paragraph of the tripartite declaration has been applied in practice and the cases of non-application of such provisions in practice.

For this purpose, relevant international legal acts and theoretical literature, as well as decisions of international courts, a number of reports and expert opinions were studied.

In the course of the study, the authors applied both coherent (analysis, principle of historicity) and special (comparative legal) principles.

As a result of the study, we came to the conclusion that the disagreements related to the legal force of the tripartite statement are real, and there are gross violations by Azerbaijan of the articles of the tripartite statement and improper fulfillment of these articles.

Keywords: *Republic of Artsakh, Republic of Armenia, Azerbaijan, tripartite statement, law of international treaties, Vienna Convention, RA Law «On International Treaties», peacekeeping contingent of the Russian Federation, fulfillment of international obligations.*

ЮРИДИЧЕСКАЯ СИЛА И ПОСЛЕДСТВИЯ ТРЕХСТОРОННЕГО ЗАЯВЛЕНИЯ «О ПРЕКРАЩЕНИИ ОГНЯ В НАГОРНОМ КАРАБАХЕ» ОТ 9 НОЯБРЯ 2020 ГОДА

АВЕТИК АРУТЮНЯН
учредитель и председатель «Объединения молодых ученых и специалистов Арцаха» (ОМУСА),
директор научно-исследовательского института «Арцах»,
главный редактор журнала «Научный Арцах»,
адвокат Палаты адвокатов Республики Армения,
учредитель адвокатской конторы «AVE JUS»,
кандидат юридических наук, доцент,
г. Степанакерт, Республика Арцах

МАРИАМ ГРИГОРЯН
помощник президента Республики Арцах,
преподаватель университета Месроп Маштоц (г. Степанакерт),
член Объединения молодых ученых и специалистов Арцаха (ОМУСА)
г. Степанакерт, Республика Арцах

44-дневная Арцахская война завершилась Трехсторонним Заявлением, подписанным 9 ноября 2020 года между Арменией, Азербайджаном и Россией. Данное Заявление своими политическим значением, юридической силой и вытекающими из этого политико-правовыми и другими выводами в различных политических и научных кругах вызывает серьезные разногласия и противоречивые мнения.

Цель статьи – изучить и выявить международно-правовую сущность подписанного Трехстороннего Заявления и вопросы, связанные с юридической силой данного Заявления как правового документа. Кроме того, в статье проанализирована степень действенного применения каждого пункта Трехсторонней декларации и случаи неприменения данных положений на практике. С этой целью были изучены соответствующие международные правовые акты и теоретическая литература по теме, а также решения международных судебных инстанций, ряд докладов и экспертных мнений.

В ходе исследования авторами были применены общенаучные методы (анализ, принцип историчности), авторы опирались также на специальные (сравнительно-правовые) принципы.

В результате исследования мы пришли к выводу о том, что действительно имеются разногласия и различные трактовки относительно юридической силы Трехстороннего Заявления, и имеют место грубейшие нарушения Азербайджаном пунктов Трехстороннего Заявления и ненадлежащее выполнение этих пунктов.

Ключевые слова: *Республика Арцах, Республика Армения, Азербайджан, Трехстороннее Заявление, право международных договоров, Венская конвенция, «О международных договорах», закон Республики Армения, миротворческий контингент РФ, выполнение международных обязательств.*